

Հայաստանի Հանրապետությունում պետական ներքին ֆինանսական հսկողության (ՊՆՖՀ) համակարգի հզորացում

Ընդհանուր տեղեկատվություն

<u>Ոլորտ՝</u>	պետական ֆինանսների կառավարում
<u>Տևողություն՝</u>	24 ամիս
<u>Իրականացման</u>	
<u>ժամանակահատված՝</u>	2014թ. սեպտեմբեր - 2016թ. օգոստոս
<u>Բյուջեն՝</u>	1 մլն եվրո

Շահառու հաստատություն՝ Հայաստանի
Հանրապետության ֆինանսների նախարարություն 

ԵՄ անդամ գործընկեր պետություններ՝ Առաջատար
գործընկեր՝ Շվեդիայի ազգային ֆինանսական
կառավարման գործակալություն, Շվեդիա 

Ծրագրի նկարագիր

Նպատակ՝ Այս Թվինինգ ծրագրի ընդհանուր նպատակն էր ամրապնդել Հայաստանի Հանրապետությունում պետական ֆինանսների կառավարման / պետական ներքին ֆինանսական հսկողության համակարգի ներդրումը՝ միջազգային ճանաչված ստանդարտներին և Եվրոպական միության լավագույն փորձին համապատասխան:

Բաղադրիչներ՝ I Բաղադրիչ՝ Ներկայիս օրենսդրության վերանայում ու այլ փաստաթղթեր,
II Բաղադրիչ՝ Պետական ներքին ֆինանսական հսկողության (ՊՆՖՀ) համակարգի մեթոդոլոգիական ունակությունների մեծացում,
III Բաղադրիչ՝ Աջակցություն Կենտրոնական ներդաշնակեցման միավորին (ԿՆՍ) ռիսկերի կառավարման հարցում,
IV Բաղադրիչ՝ Աջակցություն Կենտրոնական ներդաշնակեցման միավորին (ԿՆՍ) ներքին աուդիտի ծառայությունների հաստատման հարցում:

Ձեռք բերված արդյունքներ՝

Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված հիմնական արդյունքները հետևյալն են՝

ա) պատրաստվել են բոլոր իրավական հիմքերը և այլ անհրաժեշտ տեքստեր և գրավոր նյութեր, ներառյալ գանձապետարանին, բյուջետավորմանը, քաղաքացիական ծառայության հասարակական կազմակերպությանը և տեղական ինքնակառավարման օրենսդրությանը վերաբերող առաջարկություններ, ժամանակակից պետական ներքին ֆինանսական հսկողության (ՊՆՖՀ) համակարգը խթանելու համար, որոնք նպատակաուղղված են Հայաստանի պետական ոլորտի կարիքներին և համապատասխանում են

միջազգային չափանիշներին, հաշվի առնելով Հայաստանում պետական ծառայությունների մատուցման արդյունավետությունը բարելավելու անհրաժեշտությունը:

բ) Կենտրոնական ներդաշնակեցման միավորը (ԿՆՄ) լավ կազմակերպված էր և ուներ բոլոր անհրաժեշտ մեթոդաբանական կարողությունները Պետական ներքին ֆինանսական հսկողության (ՊՆՖՀ) համակարգի կիրառման և հետագա զարգացման, ինչպես նաև՝ համակարգը փորձարկելու և դրա հետագա զարգացումները վերահսկելու հարցում իր լիազորությունները արդյունավետ կերպով բավարարելու համար՝ համակարգելով Ֆինանսական դիտարկումների կենտրոնի (ՖԴԿ) և ներքին աուդիտի ոլորտներում իրականացվող գործունեությունները: Կենտրոնական ներդաշնակեցման միավորը (ԿՆՄ) պատշաճ կերպով գինվել է կառավարման, հաշվապահության ոլորտներում փորձառու և Պետական ներքին ֆինանսական հսկողության (ՊՆՖՀ) վերաբերյալ իրազեկված անձնակազմով:

գ) Իրականացվել են անհրաժեշտ կառույցներ և վերապատրաստումներ պետական կառավարիչներին վերջնականապես հաշվետու դարձնելու համար և, այդպիսով, ունակ դարձնելու հնարավորինս շուտ մշակել կառավարման և վերահսկման համակարգ և կիրառել ռիսկերի կառավարման ռեժիմ: Հասանելի դարձան իրավական հիմքերը կառավարման հաշվետվողականության իրականացման համար:

դ) Իրականացվել են անհրաժեշտ կառույցներ և վերապատրաստումներ ազդեցության գնահատման միավորներին՝ ապահովելու համար, որ բոլոր պետական ներքին աուդիտի աշխատակիցները գործում են Եվրոպական միության և միջազգային լավագույն լավագույն փորձին համապատասխան մասնագիտական մակարդակով:

Լրացուցիչ տեղեկատվություն՝